



**«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն**

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, (37494) 40 46 24, ֆաքս: (37410) 581102,  
E-mail: [info@hetq.am](mailto:info@hetq.am), [hetq@hetq.am](mailto:hetq@hetq.am), URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

25.05.2015թ.

ՀՀ Լոռու մարզպետ

**Արթուր Նալբանդյանին**

«Հետք» թերթի լրագրող

**Գրիշա Բալասանյանից**

Հեռ. 093-82-26-80

Հարգելի՛ պարոն **Նալբանդյան,**

«Հետքը» հոդված է պատրաստում մարզերի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար ՀՀ կառավարությունը 2014թ. որքա՞ն գումար է հատկացրել Ձեր մարզին:
2. Նշված ծրագրի ու հատկացված գումարի շրջանակում ի՞նչ աշխատանքներ են կատարվել, ո՞ր համայնքներում (նշել համայնքը, որտեղ կատարվել են աշխատանքները, գումարի չափը և կապալառու կազմակերպության անվանումը):
3. Ի՞նչ եղանակով է ընտրվել կապալառու կազմակերպությունը:
4. 2014թ. նախատեսված ծրագրերն ավարտվե՞լ են:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գրիշա Բալասանյան